



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4142
4143, 4144

281.6

U-97

1861

2010

50331-2h

2

ԲՈՂՈՒԹ ԵՐԿՐՈՐԳ

ԱՌ

ԸՐԳԵՅԻՆ ԸՆԴ ՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ


ՋՈՐ ԽՈՆԱՐՀԱԲԱՐ ՄԱՏՈՒՑԱՆԻ

ԱՄԲՈՂԶ

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆՆ ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՏՊԱԳՐԵԱԼ

ՀՐԱՄԱՆԱԻ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ



ՅԵՐՈՒՍԱԳԼԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1861



Օ ի տացի քեզ՝ կամ զինչ յաւելցի ,
լեզու նենդաւ որ . Սալ . ճժԹ . 2 :

ՅԱՌԱՅ ԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Թէ որ իրօք աշխարհիս մէջ երջանկութիւն մը կայ՝ և ահա այն է խաղաղութիւնը զոր կը վայելեն խաղաղասէրք. բայց շէնք գիտեր թէ ո՞ւր մանք ինչո՞ւ շատ հեռու կը փախչին այս բնական, մարդավայել և Քրիստոսաւանդ առաքինութենէն ու կերթան չարայոյզ խռովութեան անել անդունդը կը գլորին, իբրև իրենց վախճանական հանգիստ. որոնք միշտ կը դեգերին եղբօր բիծը քննելու նախատելով անգոսնելով, և իրաւունքին խաղառ աչք գոցելով բանակուռութի կը նիւթեն. բայց շէնք գիտեր՝ այս պիտիք ի՞նչ ըսել կուզեն. և թէ պահանջմունքնին պարզպէս մեզի իմացունեն, մենք ալ յօժարութեամբ պարզ և գոհացուցիչ պատասխաննին կրնամք տալ. բայց դժբաղդաբար հակառակասէրը յայանի շխտիր. այլ միշտ ինք զինքը խռովութեան խորին անդոս խորխորասները պահելով և իւր միտքը ատելութեան թանձրամած սև ամպերու տակ ծածկած, չուզեր բնա ՚ի լոյս գալ. «Քանզի որ զգար գործէ՝ ասեա զլոյս» :

Արդ՝ բիչ տունէ ՚ի վեր է մեզի դէմ՝ հակառակորդ մը ծագելով, այն ընթացքով կը շարակրատէ մեզի դէմ. և մեր Միաբանութեան մարդկօրէն սխալմունքը, ակամայ մօռացութիւնքը յանցանք սեպելով և երբեմն մտացածին զրպարտութիւն ընելով՝ գրչին տակ առած թշնամական ոգւով կը նախատէ՝ կը բանբասէ. և իբրու թէ (ըստ իւր կարծեաց) ճշմարտութեան մաճը բռնած՝ արդարութեան և իրաւանց լծակցութեամբը, սուրբ Աթուոյս Միաբանութեան անխառնութեամբ խոսանացեալ արար հերկելու և մշակելու կը փութայ. սլ անմտութեանս, վայ անար որ ինքը իւր մահամերձ հիւանդութիւնը չղգարով՝ թեթև հիւանդի մը գեղեր կը պատրաստէ :

Ժամանակէ մը ՚ի վեր է Լրագրաց միմեանց դէմ՝ բրած զըռեղի հա կառակութիւնները մեր սրտին ցաւ կը պատճառէին. և անմք որ իրենք զերենք Ազգին յառաջողիմութեան առիթ կը սեպեն, այսօր Ազգին մէջ խռովութիւն, ատելութիւն, նախանձ, չարակամութիւն և սսոնցպէս շատ մը չարութիւն սերմանելու կը ծառայեն. այս՝ այս անարժան գործողութեանց վրայ սրտերնուս ցաւը հրապարակաւ յայտնելու համարձակութիւնը չունենինք ուստի պէտք է զգած տեղերը կարեկցութեամբ և

դառն վշտօք կարելի եղածին շափ բերնով կը խօսէինք . բայց եկաւ ժողովանակը որ ալ հարկ եղաւ ակնածութեան քողջ հղանել , հասաւ միջոցը՝ որ ալ լռութիւնը օգուտ չնէր . որովհետեւ շափազանց խոնարհութիւնը՝ անզգայութիւն կը համարուի և կոխան կըլլայ վատասիրտ հպարտ ոտքերու . ուստի ալ հերիք սեպեց սուրբ Ուխտը իւր կողմէն պահած պարկեշտ լռութիւնը . ալ այսուհետեւ ամենայն խոհեմութեամբ կը պատրաստուի իւր իրաւունքը և արգարութիւնը ճակատաբաց ընդհանուր Ազգին հըրապարակաւ ծանուցանելու , որ եթէ Ազգային կառավարութիւնը բարեհաճի բացարձակ արտոնութիւն և հրամանագիր շնորհելու , պիտի չեղանդաղի Միաբանութիւնը որոշեալ թերթ մը հրատարակել . իր իրաւունքը , միանգամայն և պարտաւորութիւնը , կացութիւնը , վարմունքը և որ և իցէ նշանաւոր եղելութիւն մը իմացունելու :

Ահա մենք միաբան լռութեամբ մեր բաղձանքը Ազգին կառավարութեան յայտնելէն վերջը կրկութեամբ պատասխանել հակառակորդին . բայց դարձեալ (ըստ մեր նախկին խօստման) , մեր խօսքերը Ազգին բարեխօրհուրդ կառավարութեանը հետ շարունակել , թերևս կարող ըլլանք մեր միտքը և նպատակը բացատրել , և մեր հանգարտութեամբն ալ հակառակորդը խրատել . որ գուցէ թէ Աստուած ապաշխարութիւն տայ անոր ճշմարիտը գիանալ . Բ . ՏԺ . Բ . 24 , 25 :

Արդ՝ մենք պիտի աշխատենք ցուցնելու , որ նախ՝ առջի եղած անհոգութեանց մենք պատասխանատու չենք , և Միաբանութեան կամքը Ազգին կամացը հետ համաձայն է . Բ . Մեղուի խօսքերուն վրայ քանի մը դիտողութիւններ , անոր բացատրութիւնը և քանի մը խրատներ . Գ . Մասիս Լրագրոյն Արժանայարգ հեղինակին մէկ սխալ կարծեաց բացատրութիւնը . ահա՛ այս երեք խնդիրներուն վրայ պիտի ըլլայ մեր գլխաւոր խօսքը լինելը . զորն որ Ազգին կը ներկայացունենք իւր ուշադրութիւնը հրաւիրելով :



ԻՆԴԻՐ ԱՌԱՅԻՆ

Միաբանութեան կամքը Աղբիւն կամացը հետ համայայն է,
և առաջին անհոգութեան ինքը Տասնակից չէ :

Լեզու սուտ՝ ատեա՛ղ ըճմարտու,
թիւն և բերան անդադար առնէ
խռովութիւնս . Արա՛յ . ԻԶ . 28 :

Աղաչեմ զձեզ եղբարք, ճանաչել
զվատակաւորս և զվերակացուս
ձեր 'ի Տէր, և զխրատիչս ձեր 'ի
Տէր . Ա . Թէսաղ . Ե . 12 :

ԱՍՏՈՒԾՈՅ անքննելի կարգադրութիւնը, որ աշխարհիս ստեղծմանէն մինչև վերջը անխափան պիտի շարունակուի, շատ գեղեցիկ և շատ ալ բարի է : Այս անխախտելի կարգադրութիւնը՝ արարածոց մեջէն և ոչ մեկը կրցաւ խանգարել՝ և ոչ ալ պիտի կրնայ . բայց՝ Արարչին սուրբ և բարի կամացը դէմ արարածոց գերագոյնը յանդգնեցաւ մեղանչելու . այո՛ մարդկային բնութիւնը այս ահռելի ոճիրը գործեց, և պատժոյ ալ ենթակայ եղաւ : Սակայն բնութեան Արարիչը իսպառ չի մերժեց և միշտ չինախատեց այս բարեգոյն արարածը, այլ՝ Փրկիչ մը խօստանալէն զատ, իրենց կամքը իւր սուրբ կամացը հետ միացունելու համար ժամանակ առ ժամանակ իր կողմէն պատգամաւորներ մարգարենէր կը խրկէր, օրէնքներ կը հաստատեր, կարգ և կանոն կը սահմաններ, որպէս զի մարդիկ ուղղութք Աստուծոյ բարի կամացը հետևին . և որոնք որ կը գթէին այս շաւղէն, անհնարին պատժով 'ի մահ կը դատապարտուէին . իսկ հետևողները՝ խաղաղ և երջանիկ

վիճակի մէջ կապրէին . չենք կտրդար բնաւ սուրբ
Գրոց մէջ, որ Աստուած իւր կամակիցները պատժէ,
նախատէ . բայց այս եպերելի գործը՝ այս յանդուգն
բարբարոսութիւնը, դարձեալ կը տեսնանք որ մար-
դիկ կը յանդգնին բռնութեամբ կրից կատարել :
Պարզ խօսելով՝ աշխարհիս սկիզբի դարէն մինչև հի-
մա պակաս չեն եղած և պիտի չըլլան մինչև վերջը
չարագրգիւ ինքնահաւան հոգիներ, որք յանդգնե-
ցան և պիտի յանդգնին առաքինի, բարեգործ, և
երախտագէտ սրտերը վշտացունելու . և այս չարու-
թեանց հատուցումը՝ ընողը կրնայ մակաբերել թէ
որ ուզէ :

Արդ՝ ինչպէս որ մեր առաջին Հերքման մէջ հար-
ցուցինք Ազգին . նոյն պէս ալ հիմա պիտի հարցու-
նեմք, սուրբ Երուսաղէմայ Միաբանութիւնը ինչ
գլխաւոր հակառակութիւն րրած է . և ո՞ր գործն է
որ բարեկարգութեան արգելք կը սեպուի . եթէ
Մեղ-ի՞ն Ապրիլ 10 թուով մէջ բերած հինգ ընդդի-
մութիւններն են, ատոնք մէկ ստրկի արժողութիւն
չունին . զոր վերջը պիտի ցուցունեմք : Թող տուէք
ասկէ առաջին տարիները, որուն համար Միաբա-
նութիւնը բնաւ պատասխանատու չէ, եկէք սա
տարվանս մէջ ցոյց տուէք . կաղաչեմք պարզ խօսե-
ցէք առանց հակառակութեան, և մե՛նք ալ ճանչ-
նանք մեր պակասութիւնը . ո՞ր գործողութիւննիս
Ազգին բարի կամացը հակառակ է, գուցէ թէ մեր
յանկարծակի ոտք ելլալ և բարեկարգութիւն խընդ-
րելնիս է մեր յանցանքը . ութ օրուան մէջ եռան-
դուն սրտիւ հիմնական կանոններ սահմանելնիս, և
ուրիշ խանգարեալ կարգերը նորէն ուղղելնիս և ա-
տոնց նման բաները պիտի ըլլան : Արդ՝ կը հարցու-
նեմք Ազգին բարեսիրտհուրդ կառավարութեան, թէ

ինչ է իւր կամքը . Հիւանդանոց , այս նոյնն է մեր կամքն ալ . Թանգարանի և Տպարանի յառաջադէմ բարեկարգութիւն , նոյնն է մեր ճիգն ալ . և Դպրոց , այս մենք ալ կուզենք և առաւել և ս կուզենք . զորս ունենարու ջանքը և փոյթը ունինք ու կաշխատինք հոգւով չափ սահմանել :

Ուրեմն ո՞ Արժանապատիւ Տեսաբ , ի՞նչ բան կրտափայէ զձեզ՝ որ Մէլո-ի՞ն արտոնութիւն կուտայք վերջստին սուրբ Երուսաղէմայ վրայ խօսելու . (արտոնութիւն կուտայք ըսինք) . վասն զի այս անգամ պարզ կերևի որ , ձեր Վսեմութեան կամակցութեամբը գրած է իւր խռովայոյղ տողերը . այսու ամենայնիւ չի գիտցանք որ արդարախոհ կառավարութեանդ բուն նպատակը ի՞նչ է . եթէ մինչև հիմայ մեր ըրած անհոգութեան համար զմեզ նախատել , անգոսնել է ձեր կամքը . պարզապէս կրսենք որ մենք այս մեղադրանաց ենթակայ չենք . որովհետև մեր միաբան լութիւնը միշտ կը ցաւէր Վանքին այն կերպ ընթացքին վրայ , և շատ անգամ իւր ցաւը յայտնած էր շատերուն . ուստի եթէ ներելի է մեզ համար ձակ խօսիլ , այս անհոգութիւնը ուղղակի Ազգին կառավարութեան կը վերաբերէր . վասն զի չենք գիտեր ի՞նչ պատճառաւ ձեր Վսեմութիւնը միշտ զանցաութիւն ըրաւ սուրբ Երուսաղէմայ խնդիրը քննելու , և ՚ի դործ դնելու . երբեմն հոգաց ալ նե՛ չի ջանաց գլուխ հանելու . այս մասին բարեջան կառավարութիւնդ ինչ պատճառ ալ որ մէջ բերէ ինքզինք արդարացունելու համար՝ իրաւունք (ունի կրտսենք) , և առանց հակառակութեան կ'ընդունիմք . Ուստի կաղաչենք որ դուք ալ բարեմտութեամբ մեր առաջին լութեան պատճառը յիշէք և արդարութեամբ մեր իրաւունքը զգայք , որով պարզ պիտի

տեսնաք որ, Միաբանութիւնը այս մասին բողոքովին աղատ է ՚ի մեղադրանաց, և ուրախ ենք մենք որ պարտաւորութիւնիս կատարած՝ աղատ եմք իսպառ և և իցէ խղճահարութենէ, ուրախ ենք նաև որ մենք այս դարուն մեզի պատկանածը չենք զլանար, դո՛ւ ենք որ ըստ ամենայնի փոյթ և ջանք ունինք հաստատել ան ամէն բարեկարգութիւնները՝ որոնք նը պաստ են յառաջագիմութեան. եթէ մեր աշխատութիւնը մէկ օր արգելուի իւր ընթացքէն, գիտցիք որ պատճառը մենք չենք :

Անանկ էնէ դարձեալ կը խնդրենք, մի այդպիսի անտոյի խնդիրներով բանակցութիւնը երկարէք և զուր ժամանակ կորսնցունէք. եթէ ճշմարիտ յառաջագիմութեան կը ցանկաք (ինչպէս որ վստահ ենք), ապա անկեղծութեամբ ճանչցիք մեր զգացմունքը, և ըստ այնմ տնօրինեցէք : Քանի որ մենք մեր միտքը հաստատ դրած եմք թէ, այսպիսի Վանք մը Ազգին շատ օգուտներ կրնայ մատակարարել ՚ի մասին յառաջագիմութեան, և լուսաւորութեան. քանի որ մենք իսկ ՚ի բոլոր սրտէ կը փափաքինք օր յառաջ ՚ի գործ դնել ամէն բարեկարգ տնօրէնութիւնները. վերջապէս քանի որ մեր կամքը Ազգին բարի կամացը հետ համաձայնութիւն և համակրութիւն ունի, ալ ինչ հարկ կար Արագրի մը (և խայտառակ Արագրի մը) ձեռքով մեր տխուր սիրտերը նոր ՚ի նորոյ կրկին և կրկին խոցել, վշտացունել անպարտ տեղը : (խայտառակ) ըսինք և թող չի բարկանայ հեղինակը, ինչու որ բարեմիտ և ճշմարիտ Ազգասէր Արագիրները միշտ խայտառակեցին զինքը ըստ ամենայնի և դեռ նա չամաչէր. ուստի միշտ խայտառակուելու անպատուութեան դժբաղդութիւնը պիտի ունենայ և ամաչելիք ալ չունի :

Ի՞նչ հարկ կար կըսենք, որ դարձեալ թոյլ տուիք նա-
րանոր ոչինչ անխմաստ ինդիրներ, անտեղի կասկած-
ներ և սնտոի կարծիքներ մէջ ձգելով յօդուածներ
գրեց, և անխոհեմ կերպով կը խօստանայ դարձեալ
գրել, արգարև ասոր բուն պատճառին վերահասու
չըլլալնիս՝ արտաքոյ կարգի զարմանք կը պատճառէ
մեզ. բայց ոչ եթէ Մեղուի գրելուն համար, որուն
վրայ զարմանալու առիթ չունինք. ըստ որում գի-
տենք իրեն քանի ստակի մարդ ըլլալը, և իրեն խօս-
քերը չեն որ մեզի կազգեն, այլ՝ ձեր Ասեմութեան
արտաքոյ կարգի թոյլտուութիւնը և զարմանք պատ-
ճառող անհոգութիւնն է որ զմեզ կը շփոթէ, և թող
չի կարծէ Մեղու՝ որ զինքը մարդու տեղ դրած և ի-
րեն խօսքերը բան մը սեպելով կը բռնադատուինք
խօսելու, քան լիցի այդ սպաիւր անոր չենք ըներ.
մեր միտքը վեհանձնութեամբ զգացմունքնիս յայտ-
նել է վսեմ կառաւարութեանդ. որուն առթիւր
անոր զըախօսութեան աչք չի գոցել պարտք համա-
րեցինք. բայց ըստ որում մեր խօսքը ուղղակի ար-
դարախոհ կառավարութեանդ հետ է, ուստի ձեզի
կիյնայ արժանը անօրինել, միայն վստահ եղիք կա-
ղաչեմք որ մենք ըստ ամենայնի պատրաստ ենք Աս-
տուծոյ զօրութեամբը նետուելու այն ամէն վտանգ-
ներուն մէջ՝ որոնք արգելք կրնան ըլլար լուսաւո-
րութեան. համոզուեցէք ո՞ Տեարք որ մենք սուրբ
Հոգւոյն կենսատու շնորհիւր մեր միտքը, կամքը,
ուղեղը, եթէ հարկ ըլլայ մինչև անգամ մեր կեան-
քը Ազգին բարեացը զոհելու չենք զլանար. չէ՛ ալ
չենք կրնար հանդիսատես կենալ. քանզի անզգայ չենք.
Իսցց տա՛ր Աստուած, որ դուք ալ օր յառաջ ճանչ-
նայիք մեր սիրտը և հոգին, ու ժամանակ չի կորսըն-
ցունելով փութայիք մեր և Ազգին իղձը կատարելու

Ֆիջոցը ձեռք առնել, առանց այլ և այլ կարծիքներով պաշարուելու . որով վստահ եմք որ դուք ալ վերջը գոհ պիտի ըլլաք, և պիտի զգտք թէ այսչափ ուշանալէն որչափ փնաս եղաւ թէ սուրբ Ռւխտիս և թէ ընդհանուր Ազգին : Արդ յուսալով որ սոյն համառօտութեամբ կրցանք մեր կամքը Ազգին բարի կամաց հետ նոյն ըլլալը, և առաջին անհոգութեանց մեր մասնակցութիւնն չունենալը յայտնել, ալ կը վերջացունենմք խօսքերնիս այս նիւթին վրայ, և կանցնինք ուրիշներն ալ սոյն համառօտութեամբ բացատրել :



ԻՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴ

Մեղաին խօսերոսն վրայ խանիմը զիպողը-լիան. անոնց
բայապրո-լիանը, և իրեն խանի մը խրատ :

Մի տար զպատասխանի անզգամին
լատ նորա անզգամութեանն, զի մի
լինիցիս նմանող նորա. այլ տուր զպա-
տասխանի, զի մի երևեսցի իմաստնը,
գոյն յանձն իւր. Առաջ. ԻԶ. 4. 5.
Հանդարտութեամբ խրատել զհա-
կառակօղան թերևս տացէ նոցա Այ-
տուած ապաշխարութիւն 'ի գիտու-
թեան ճշմարտութիւն. Բ. ՏԻՎ. Բ. 25 :

Սենք վստահ էինք որ մեր առաջին բողոքը թէ-
պէտ համառօտ, բայց՝ բաւական պիտի ըլլար մեր
սրտին զգացմունքը և անմեղութիւնը բացատրել.
սակայն դժբաղդաբար դուք ո՛ր Ազգախնամ կառավա-
րութիւն կը տեսնանք որ դուք չէք ուղէր համոզ-
ուիլ մեր սրտին անկեղծ զգացմանցը, և չենք գիտեր
ի՛նչ պատճառաւ սոյս անգամ Մեղաին Պատրիարքա-
րանի դիւանէն նիւթ կը մատակարարէք, որուն հա-
մար խեղճ Մեղաին բաւական ժամանակ կորսնցուցեր
է. բայց երանի թէ այդ ազնիւ և անգին ժամանա-
կը ուրիշ օգտակար նիւթի մը վրայ ծախէր. այլ ի-
րեն ասիկայ աւելի շահաւոր գործ մը կերելի եղեր,
հոգ չէ, թող քանի կրնայ ինքը զուր ժամանակ կոր-
սընցունէ. բայց թող գիտնայ և (ինչպէս ալ որ գի-
տէ) իւր արժէքը ցուցունելու նորանոր փաստեր
կուտայ. իսկ մենք քանի որ Ազգին կամօքը ուրիշ օգ-
տակար գործերու գեռ չենք զբաղած պիտի չի դա-

դարինք մեր իրաւունքը սիրելի Ազգէն և անոր կա-
ռավարութենէն բողոքելու, և ըստ պահանջման
հարկին Մեղ-ին չարայոյզ խօսքերը յիշեցունելով ձեր
Վսեմութենէն դատաստան խնդրելու: Աւստի կա-
ղաչենք ո՛ր Բարձրապատիւ Տեաքք. բարեհաճեցէք
քաղցրութեամբ լսելու և արդարութեամբ դատե-
լով այս խռովութեան վերջ մը տալու, որովհետև
բացայայտ կերևի՝ որ երթալով խնդիրը ծանր կեր-
պարանք մը պիտի զգենու և զանազան չարեաց ա-
ռիթ պիտի տայ, ուրեմն եթէ կարելի է բաւական
սեպեցէք և բուն պէտք եղածին վրայ խորհելով օր
յառաջ սուրբ Երուստղէմոյ փափուկ ու կարևոր
խնդիրը խաղաղութիւն վերջացունելու փութացէք:

Այսպէն եթէ գիտնայինք որ մեր Միաբանու-
թեան մէջ ամբողջութիւնը բաժնօղ սիրտեր կան,
արդարեւ չի պիտի համարձակէինք որ և իցէ գործի
մը վստահութեամբ ձեռնամուխ ըլլալ, բայց որով-
հետև մենք Աստուծոյ շնորհիւր վստահ ենք մեր մի-
ութեան անլոյծ կապակցութեանը վրայ, չենք վհա-
տիր թշուառ ոգիներու խաբէական խօսքերէն, չենք
լքանիր երբէք, չենք շփոթիր բնաւ մոլի կամապաշտ
մարդկանց որոմնացան գրիչներէն. բայց՝ պարզամիտ
հասարակութեան մտքին մէջ ծագած կարծիքները
տարակուսութիւնները փարատելու անփոյթ չենք
կրնար կենար. այլ ափսոս որ տկամայ ստիպուած ենք
գրիչ շարժել: Եւս որում մեր առաջին Հերքման վը-
րայ ողորմելի Մեղ-ն կը կատկածի թէ արդեօք (ա՛հ
Բողջ Դեբանո-իւնէն՝ն, և այլն. Մեղ- Ապրիլ 10). ո՞վ Առ-
գասէր ոգիներ, ո՞ր ողջամիտ չի կրնար ցաւիւր, երբ
կը լսէ որ իր մէջը յայտնի ճշմարտութիւնը երկբայ-
ութեան և կարծեաց տակ ձգող խեղճ գաղափար
մը կը գանուի:

Մի գլխած երկինք , ինչե՞ր կը լսենք սա լուսա-
ւորեալ դարուս մէջ՝ լուսաորեալ . . . սեպուած գա-
ղափարէ մը . սուրբ Երուսաղէմայ Միաբանութենէն
գրուած , սուրբ Յակովբայ Տպարանը տպուած թեր-
թի մը վրայ տարակուսիլը , այդ ձեռքը կամ ոտքը
քուկէ չէ ըսելէն տարբերութիւն մը ունի . սքան-
չելի կուրուժիւն : Այս երկբայութեամբ հասարա-
կութեան մտքին մէջ որոմ ցանել չէ . միմեանց դէմ
ծուռ գաղափարներ ունենալու առիթ տալ չէ . ո՛հ
ինչ գեղեցիկ Ազգային կեանքի ուղիչ ունինք . ուրախ
լե՛ր Հայոց անգգ , ցնծա՛ւ և զուարճացիր խոտորեանդ
յուզղուժենէ . քանզի ահա՛ քեզի առաջնորդող և
քու կեանքդ ուղղող , կենսախոտոր մահամերձ Մե-
ղա մը ունիս , որ ինք իր կեանքը ուղղելու և կիրքը
խոհեմութեամբ չափաւորելու կարող չըլլալով անձ-
նասէր ոգւով քու կարծեցեալ թիւր ընթացքդ
ուղղելու կը ճգնի . բայց դու օրհնեալ Ազգ մի խաբ-
ուիր , ինչու որ քու կենացդ ուղղիչ օրհնեալ սահ-
մանադրութիւնը պարբէեց Արարիչը . և մենք գի-
տենք որ դուն քու դարաւոր փորձառութեամբդ
չի պիտի խաբուիս ատանկ ներուն . և դու
ո՛ խոհական բարերար Վարչութիւն , դու միայն
պարտաւոր ես զհասարակութիւնը ապականարար
օդերէ՛ զովացուցիչ կենսատու զեփիւռին առաջ-
նորդել և դառնահամ օշարակներուն տեղ անմա-
հական նեկտառներ մատուռակելու . դու ես զհա-
սարակութիւնը մնասակար լեզուներէ ազատողը , և
վերջապէս դու պիտի ըլլաս հասարակութեան կամ
ընդհանուր Ազգութեան միտքը հանդարտեցունողը
թէ սուրբ Երուսաղէմայ Միաբանութիւնը իր ամ-
բողջութիւնը պահած է , և ինչ որ կնէ միութեամբ
և պարզութեամբ կրնէ : Բնէ կաղաչենք , ըսէք մեր

օրերէլի և օրհնեալ Ազգին . որ մենք զինքը կը սիրենք հոգւով չափ , և իրեն փառաց ու պայծառութեան համար ոչ ինչ կը խնայենք . բայց եթէ չարամիտ մէկը Միաբանութեան անունով Մեղուին սուտ սխալ նիւթեր կը մատակարարէ , հաստատ գիտցիք որ այն պիտի բարոյապէս Միաբանութենէն , և անոր հոգևոր պարգևներուն մասնակցութենէն հեռու է . զոր կը յուսայ մեր ամբողջութիւնը թէ անշուշտ բարերար Աստուծմէ պիտի ընդունի իւր ճգնութեանց իբրև մրձանակ . իսկ անանկները (թէ որ իրօք կան) թող յիշեն Վասակը , Մեհրուժանը , վէստ Սարգիսը և այլն ու թէ որ կուզեն խղճերնին թող արթնցունեն . պատուախնդիր փառասէր ոգին թող մերկանան , և ահա՛ կը տեսնան որ մենք անպարտ , իրենք պարտաւոր . անատենն ալ կամք կընեն նէ՛ թող զղան . բայց չըլլայ թէ Սաւուղին և Յուդային զղումը դառնայ իրենցն ալ :

Իսկ եթէ Մեղուին դեռ ևս կը տարակուսի , թող կարգայ մեր տետրակին ստորագրութիւնը և հոն իւր տարակուսութիւնը կը փարատի . թէպէտ խարդախութեամբ կըսէ թէ՛ դեռ յեռերնիս չե՛ հասաւ . սակայն այդ մեղի փոյթ չէ , թէ որ ուզէր կրնար գրանալ , և թէ որ ճշմարտասէր ըլլար՝ փոյթ կունենար գտնալու կարդալու և ապա գրիչ ձեռք առնելու . բայց այսու ամենայնիւ մենք չենք կրնար հաւատալ որ կարդացած չըլլայ . և ամսո՛ս իրեն . ամօ՛թ երեսին . տեսէք իրեն կամապաշտութիւնը որ դեռ պատասխանել և մեր տետրակին արժէքը ցուցունել կը խօստանայ : Այո՛ քանի որ ողջմտութիւնը պակաս է՝ ուղիղ դատողութիւն չունի . մինչև հիմա ըրած սուտ ու սխալ անհիմն խօսքերուն պէս շատ բաներ ալ կըրնայ գրել . որոնց քանի ստրկի արժէք ունենալը ար-

դէն ճշմարիտ Ազգասէր և ողջամիտ Ազգային Լրագիրները լի ու լի յայտնեցին, և դեռ նա չամաչէր. Աւանդ ինչ ցաւ և ինչ վիշտ կղզայ մեր սիրտը, երբ կրտեսնանք տաղանդի տէր մէկը Աստուծոյ իրեն պարգևած ձիրքը չարաչար կը գործածէ. արդարև կափսոսանք՝ երբ կը տեսնանք սյապիսի թերթ մը, որ Ազգին շատ օգտակար նիւթէր կրնայ մատակարարել դժբողոքաբար ընդ հակառակն բռնութեամբ կրից շատ չարեաց պատճառ կըլլայ կոր:

Արդեօք, ինչ անմտութիւն է Մեղին ըրածը. քանի որ ուրիշ Ազգօգուտ նիւթեր շատ կան, ինքը հակառակ և խռովասէր ոգւով կերթայ Պատրիարքարան և զուր ժամանակ կը կորսնցունէ, և իբր գանգատ իր տողերուն մէջ յիշելը չի մոռնար. անմիտ կենդանի, մենք ինչ ընենք, ըսէք իրէն բարեկամաբար որ խելքը գլուխը ժողովէ, կիրքը թող չի պաշտէ, օրինաւոր, ազգօգուտ, պարագային յարմար նիւթերու թող պատաղի, և ահա ժամանակ կորսընցուցած չըլլար. որով ընդհանուր Ազգին շնորհակալութիւնը ընդունելու և անոր համակրութիւնը ըստանալու բարեբաղդութիւնը կունենար. իւր իսկ ժամանակ կորսնցուցի ըսելը յայտնի ապացոյց է նիւթին անպիտանութեանը և զուր վատակին:

Ուրեմն կաղաչէ՛նք ո՛ պատկառելի Ատեան. բարեհաճեցէ՛ք ըսելու այդ... Մեղին, որ ՚ի սէր մարդկութեան, ՚ի սէր Քրիստոնէութեան, չըլլայնէ՛ ՚ի սէր ամենակարողին Աստուծոյ. ՚ի փառս Ազգին և ՚ի պատիւ անարատ սուրբ Ռխտիս թող ըլլայ. քիչ մը խղճմտանքը թող արթնցունէ և ինչ որ օգուտ կնէ ընդհանուր Ազգութեան՝ թող անոր վրայ յոգնի. ցաւելով կսենք, որ խթանին դէմ կից արձակելէ թող դադարի. և աչքը ճշմարիտ լուսոյն թող ուզ


դէ , թէ որ աչքը շնանալէն կը զանգիտէ՝ հոգ չէ ,
թող չի վախնայ . ինչու որ կարող է Աստուած Անա-
նիա մը խրկելու , որ վրան ձեռք դնելով՝ « Սաւուղ
եղբայր 'ի վեր հայեաց » ըսելով՝ աչքին վրայի մշու-
շը կեղևներու նման իյնայ և համարձակ տեսնայ ճըշ-
մարիտ լոյսը և ճշմարիտ լուսաւորութիւնը . քանզի
իր կարծեցեալ լուսաւորութիւնը ճշմարիտ չէ . այլ՝
ճշմարտութեան պատրուակով խարդախութիւն մնէ .
Անանկ է նէ թող Մեղուն ալ ճանչնայ իր գործոյն ար-
ժէքը , և թող զզջայ , և թող արթննայ իր ատելու-
թեան կրից թմրութենէն որով չի կրնար կոր աղէկը
գեշէն որոշել :

Արդ՝ որովհետև խօստացանք Մեղուի հինգ ընդ-
դիմութիւններուն վրայ դիտողութիւն ընել , զոր
կրօնական Ճողովը ըրած է , ուստի ըստ պահանջման
հարկին չենք դանդաղիր բացատրել և հասկըցունել
հասարակութեան որ անոնք ընդդիմութիւն չեն .
այլ՝ հարկաւոր խնդիրներ որ ազատ է ամմէն մարդ
իր մտաց շնորհածին համեմատ առաջարկել : Հիմա
հարկ չիկայ հոս նորէն յիշել , և ստորասել կամ բա-
ցասել Եպիսկոպոսի մը գալը կամ չի գալը . ուղղը
թող մեր Հերբումը ուշագրութեամբ կարգայ և տե-
ղեկանայ . մենք տեսնանք թէ Սեթեան Արժանա-
պատիւ Յովհաննէս վարդապետին ըրածը ընդդիմու-
թիւն է , զոր Մեղուն ան խոհեմաբար կը շողակրա-
տէ : Թէ որ Մեղուն նախ (դիտողութիւն) ըսած չըլ-
լոր՝ գուցէ թէ միտքերնիս նախապաշարուէր . բայց
ըստ որում ինքը կը խոստովանի որ նոյն Արժանապա-
տիւ սուրբ Հայրը խոհեմութեամբ դիտողութիւն
մը ըրած է , հասպա վերջի ընդդիմութիւն բառը
ի՛նչ է . ան ալ իւր չարամտութեան հաւաստիքն է .
քանզի դիտողութիւնն ու ընդդիմութիւնը միմեանց

հետ չեն միտքանիր . իսկ թէ որ անոր կամքը ընդ-
 գիմուծիւն ընել էր , ինչո՞ւ կարծիքը փարատելէն
 վերջը չի հակառակեցաւ . սակայն չէ անոր միտքը
 հակառակուծիւն չըլլալուն ասացոյցը իւր համո-
 զումն է , ուրկէ բացայայտ կերևի որ նորին սրբու-
 թեան միտքը կետի՞մը վրայ դիտողուծիւն ընել էր
 և ոչ ընդգիմուծիւն . ուրեմն թող գիտնայ ձեր բա-
 րեջան Կառավարուծիւնը ընդ որում և հասարա-
 կուծիւնը , որ թշնամաբար գրուած են . և համոզ-
 ուեցէք կաղաչեմք համոզուեցէք որ մեր կողմէն ձե-
 ղի ընդգիմուծիւն ընող չիկայ :

Կրօնական Ժողովին կողմէն խառն Ժողովին ներ-
 կայացած Կանոնադրուծեան հիմնագրի մը , քաղա-
 քական Ժողովին Կանոնադրուծեան երկու գլխա-
 ւոր կետերուն հակառակ և Սահմանադրուծեան
 տրամադրուծեանցը անհամաձայն գտնուելը . երկ-
 րորդ ընդդիմո-թիւն կանուանէ Մեղան . (իի- 10 ,
 երէս 11) : Թէպէտ սյդ Կանոնադրուծիւնը մենք չի
 տեսանք , որուն վրայ ընդարձակ ալ չենք կրնար խօ-
 սիլ , բայց ողջխոստ և բարեմիտ կարծիքովմը կրսենք
 որ անիկայ գուցէ տեղւոյն , ժամանակին , և պարա-
 գային համաձայն խմբագրուած պիտի ըլլար . որուն
 Մեղան անտեղեակ ըլլալով ընդգիմուծիւն կանուա-
 նէ . չէ , Տեսարք մեր , չէ , քաւ լլցի թէ մեր միու-
 թիւնը ձեր Կառավարուծեան հակառակ ըլլայ . այլ
 շատ համաձայն է . ՚ի խոր սրտէ կը մտաղծենք որ ար-
 դար դատողուծեամբ ճանչնայիք մեր սիրտը . և մեր
 կամոց ձերինին հետ ունեցած համակրուծիւնը :

Ըսկէ վերջը , նոյն խոհեմ և շնորհունակ Սեթեան
 Արժանապատիւ Յովհաննէս վարդապետին նզովքի
 դիրք մը ներկայացունելը երրորդ ընդդիմո-թիւն կը սե-
 պէ . կը զարմանամք արդարեւ թէ Մեղան ինչո՞ւ ողջ-



մտու թիւն չունի, ինչո՞ւ արդեօք խիղճը կը քնացու-
նէ, չէ՞ որ նոյն գրքին ներկայանալը Ճողովքին ըզ-
գու շու թիւն մնէ. որով կը յիշեցունէ թէ չըլլայ որ
այս կետերուն հակառակ գործադրութիւն կամ ու-
րոշում ընէ, որուն պատճառաւ. սուրբ Աթոռին
քաշածը նոյն գրքին մէջ ընդարձակ նկարագրուած
է, և թէ չըլլայ որ իր որոշմանցը մէջ ապագային
նոյն նշովքը Ազգին վրայ բերելու առիթ տուող կեա-
մը գտնուի. ասոր այսպէս ըլլալուն ապացոյցը Մե-
ղան իր տողերուն մէջ թող բնառէ և կը գտնայ որ
կրօնական Ճողովք առանց հակառակելու համոզուեր
է. տա՛ր Աստուած որ Մեղան ալ կամակար սիրով հա-
մոզուեր և ասանկ չնչին բաներով հակառակութիւն
չի հանէր :

Չորրորդ կարծեցեալ ընդդիմօթեան համար ալ եր-
կար խօսելիք չունինք, ինչու որ ոչ կրօնական Ճողո-
վին միտքը գիտենք և ոչ քաղաքականին իշխանու-
թեան կարողութիւնը. ուստի ասոր համար ալ ըսե-
լիքնիս միայն սա է որ, կրօնականը միտք մը ունէր, և
անոր միտքը հասկնալով համոզելը, քաղաքական և
խառն Ճողովներուն խոհեմութենէն կախում ու-
նէր, և որովհետեւ խնդիր մը յառաջարկելը իրա-
ւունք է, ուրեմն կրօնական Ճողովին բրածնալ ընդ-
դիմութիւն չէ, ասոր ալ Մեղան չի համոզուիր նէ
իրեն ինչ ըլլալուն նոր ապացոյց մը նալ տուած կըլ-
լայ : Ասկէ քիչ մը անդին Երուսաղէմէն եկած նա-
մակներուն ուշանալուն վրայ ուշադրութիւն կը հը-
րաւ իրէ. բարէ, ի՞նչ նուրբ քննութիւն, և ի՞նչ խո-
րամանկութիւն, քանի որ պատճառը բացայայտ ա-
րևու նման պայծառ է, ի՞նչ մտքով կը յանդգնի կաս-
կած ձգելու. որովհետեւ եղանակը ձմեռ էր և այն
ատեն հոս սաստիկ փոթորիկով ձիւն եկաւ. Յուպէի

ծովն ալ յայտնի է որ փոքր հովէ մը անգամ կը խռովի և նաւերուն անմատչելի կըլլայ, ուստի թէ նաւակները և թէ կանոնադրութիւնը Յունվար մեկին դրուած, տպուած և կնքուած էր. իսկ հինգշաբթի որ հինգն է սոյն ամսոյ, այն օրը կըլլայ սուրբ Երուսաղէմայ թղթատարը, և վեցին Յոպպէ կը հասնի, նոյն օրը նաւ չէր եկած Յոպպէ և չեկաւ մինչև յունվար 24. մինչև Գէորք Սրբազանը վսխճանեցաւ և դեռ նամակները Յոպպէ էր. արդ ասոր հաշիւը թող Մեղուն ընէ և տեսնայ թէ նամակները ե՞րբ կը հասնին Պօլիս. և թող ինքը իրմէն ճանչնայ իւր ուշադրութեան արժէքը. աւանդ, հազար ախտոս որ իւր թերթը փցուն անտեղի խնդիրներով կը լեցունէ 'ի զարմացումն և 'ի ձանձրութիւն ընթերցողաց:

Մտերութիւնը մարդկան դատողութեան ուղղութիւնը կը ծուէ, և թէ իրաւ թէ սուտ խօսք մը լսածին պէս իսկոյն չարաչար դատողութեամբ, հակառակ սխալ կարծիքներով խռովութիւն թշնամանք կը յարուցանէ. կան ոմանք որ իրենց տգիտութեամբ ուղիղ դատողութենէ կը սխալին, որոնք թերևս ներողութեան արժանի են. բայց շատերը կան՝ որոնք իրենց ատելութեամբը չարաչար կը դատեն ուրիշները ու իրենց անձին սոսկալի դատաստան կը պատրաստեն. որոնք թէ որ իրենց կարծիքը դէպ 'ի բարին ուղղէին, կրնային եղած գործոյն էութիւնը ուղղութեամբ կշռել կամ գործողին մտքը իմանալ, և չէին յանդգներ զուր տեղը սխալ դատողութիւն ընել, այնչափ գժտութեան, խռովութեան, ու երկպառակութեան ալ առիթ չէին ըլլար. երանիք թէ Մեղուն ևս ձանձնար իր սխալ դատողութիւնները և թիւր կարծիքը. որով իսպառ պիտի հալածէին բոլոր խռովութիւնները. և պիտի թագաւորէր, սէր,

խաղաղութիւն, միութիւն, և բարութիւն:

Արդ՝ Սրբազանին մահուանէն վերջը մենք զբաղ-
մանց մէջ էինք բայց ոչ շփոթութեան, (ինչպէս կը
կարծէ Մէլըն) . քանզի Հանգուցելոյն մահուանը
վերաբերեալ պարտաւորութիւնն իսկ Կատարելն էս
վերջը, անոր վրայ շփոթելու բան մը չունէինք, այլ
մեկզմեկ քաջալերելով մխիթարելով ժողովեցանք, և
ամէնէն յառաջ խորհուրդ ըրինք որ Պատրիարքի
ընտրութենէն յառաջ, հիմնական բարեկարգ Կանոն-
ադրութիւն վերահաստատենք, որ եկող Պատրիարքը
միապետական իշխանութիւն չընէ. այս բան, յաջո-
ղութեամբ կատարեցինք. բայց՝ խնդճ Մէլըն այս
բանին շատ կը զարմանայ թէ, (ինչպէս սուրբ Երուս-
տղէմայ Միաբանութիւնը որ բնականապէս շփո-
թութեանց մէջ ըլլալով, կրցեր է շաբթուան մը մէջ
Կանոն սահմանել, տպել և յունվարի մէկին ալ խոր-
կել) . բայց կրեսնք որ « Եթէ հաւատարմեծամեծս
տեսնիր » . այն արդարեւ թող չի զարմանայ և այլոց
միտքը չի շփոթէ . այլ թող հաւատայ որ, այս (ըստ
իւր կարծեաց գրել չի գիտցող) միաբանութիւնը՝
աշխատեցաւ առանց ուրիշ բանի նայելու, և Կա-
նոնադրութիւն հաստատեց, տպեց և խրկեց . ու
անխոնջ կը ճգնի անոր գործադրութիւնը որ յառաջ
տնօրինել . ուրեմն թող պատկառի, և թող լուէ քիչ
մը . ինչու որ հոս իրեն կարծեաց տէր մարդ չիկայ .
« Ո՛վ չար և մոլար կարծիք՝ խոշտանգիչ մարդկոյին
» կենաց և թնամի խաղաղութեան, որ գողեալ զօ-
» ղիս յամենայն մոլութիւնս և չարաչար տանջես
» զազգ մարդկան » : Ափսոս որ մարդիկ իրենց վատ
կիրքը պաշտելու և սխալ կարծիքնին հաստատելու
համար փաստեր կը բնտուեն, և երբ չեն գտնար՝ ալ
ինչ ընենին չեն գիտեր, պատէ պատ կը զարնուին .

կը վերաւորուին և կը վերաւորեն անմեղներու սիրտը . որով և ձեր Ազգախնամ բարեխորհուրդ կառավարութեան պատուական գլուխը ցաւցունելու առիթ կը լլան :

Ի՞նչ հարկ կար վերստին որբ և անտէր բառերը յիշելու , երբ մենք մեր Հերքման մէջ բացատրած էինք ատոր բուն միտքը . ուրեմն ձեզի կը հարցունեմք ըրածը խարդախութիւն ու բծախնդրութիւն չէ՞ . արդ՝ թող գիտնայ Մեղուն որ եթէ վանքին մէջ մէկ հատ փորձառու Միաբան մնայ , Ատուծոյ կարող զօրութեամբը , Ազգին և Ազգութեան շնորհիւր՝ իր կարծածին չափ որբ և անտէր մնացած չի սեպուիր : Կը ցաւինք արդարև որ խօսքերնիս ակամայ կերկարի . քանզի դիմացնիս ուրիշ անտեղի խնդիրներ կելլայ , որոնք թէ և պատասխանելոյ արժանի ալ չեն . բայց ընթացքնուս մէջ չենք ուղէր զանցառութիւն ընել հետևեալ խնդիրներն ալ դիտելու : Արդ ըստ որում Արժանապատիւ Իսահակ վարդապետ Հայր մեր և սուրբ Աթոռոյս կողմէն պատգամաւոր եկող Յակովբ վարդապետ Մեծապատիւ եղբայր մեր անիմանալի ընդդիմութիւն ըրած են քաղաքական Դողովին և որպէս թէ (ըստ Մեղուին) մեր նամակին (բուն իմաստին բոլորովին հակասական ըլլալուն աւելի զարմանք պատճառեր է) մենք ալ կը սենք որ անոնք մեզնէ ինչ լսեցին նէ՝ նոյնը պատմեցին . թէ որ ուրիշ բան մը կայ զոր մենք չենք գիտեր , չի գիտցածնուս պատասխանը չենք կրնար տալ . թէ որ Եպիսկոպոս չի գալուն վրայ է եղած ընդդիմութիւնը , ատոր մենք ալ համամիտ ենք . իսկ մայր Եկեղեցւոյ Շնորհունակ գիտնական Տէր Գէորգ քահանային բերնով՝ կրօնական Դողովէն ոմանց ըսածը զոր Մեղուն հինգերորդ ընդդիմութիւն կանուանէ . քաւ

լիցի բնաւ ընդդիմութիւն չէ, շատ օրինաւոր խորնդիր է, միայն թէ ձեր կողմէն (ինչո՞ւ և անոնց կողմէն լասն զի բառերուն կարօտ էր) . որ բանը պարզուէր և ընդդիմութիւն չըլլալ նալ նոյն ընդդիմաբանը զգար . ՚ի հարկէ ուրիշ Եպիսկոպոսաց վրայ համարում և վստահութիւն չունին . վասն զի անվշտ և անպարտ Մեղուն չի թողուց որ ըլլայ . անանկ էնէ ատոր ալ լիովին պատասխանը նոցին Արժանապատուութիւնը կըրնային տալ՝ թէ որ հարցուէր :

Սեր ըսելիքը սա է որ, ինդիրը ներքին դիտողութեամբ օրինաւոր է և հարկաւոր . ու բնաւ ընդդիմութիւն ալ չէ, հոս ալ թող Մեղուն առջևը նայի, գուցէ թէ առաքինութեան գոյն տեսնուի դէմքին վրայ :

Արդ՝ մենք ձգենք ոչինչ խնդիրները, վասն զի ասկէ վերջի եղածներն ալ մի և նոյն արժէքը ունին զորս կրկնելը աւելորդ կը սեպենք և ընթերցողաց ալ ձանձրութիւն : Եթէ Ազգին բարեխորհուրդ պաւալարութիւնը կը բարեհաճի, թող զանազան տարածայնութեանց ականջ չի դնէ . ինչու որ, երեք հոգի ընտանեաց կամ մէկ քանի դրացեաց մէջ անգամ շատ տեսակ տարածայնութիւններ կրնան պատահիլ, խոհեմ դատաւորին կիյնայ անոնց մէջի իրաւը սուտէն նախատեսութեամբ որոշել և ըստ այնմ իազաղութիւն ընելը . այն ձեզի կիյնայ ո՞ր ընդհանուր Ժողով, Ազգին վրայ սպառնայ գալիք չարեաց առջևն առնել . դուք խորհելու էք այս փափուկ միջոցիս բռնելու ընթացքնիդ, դուք պէտք է որ գիտնաք, թէ խռովութեան և թէ խաղաղութեան ժամանակներուն մէջ աղէկ կառավարելու կերպը . ալ աւելի գիտնալու էք նախատեսութեամբ որ չըլլայ թէ խաղաղութիւնը խռովութեան, սէրը ատելութեան, միութիւնը երկպառակութեան փոխուի . « Վայրկե-

» նական սխալումն գլխաւորաց ժողովրդեան՝ վնաս
» մեծ գործէ բաղմաց, և ձգի ՚ի բազում դարս
» զի եթէ միանգամ սխալեսցին ՚ի դատաստանի, թէ
» և բազում անգամ զղջասցին, ոչ յետս դառնան
» սխալմունք նոցա » : « Որ կարող էր արգելուլ ըզ
» վնաս կամ զանարգանս Ազգին իւրոյ, և զանցա
» ութեամբ իրով եթող վնասիլ կամ անարգիլ,
» հարկաւ վնասի կամ անարգի և ինքն ընդ Ազգին
» իւրոյ . զի յապականիլ բողոքին՝ ապականի և մասն
» նորա » :

Արդարև կը ցաւին մեր սրտերը երբ կը տեսնանք
գործոյն այսչափ ուշանալը, և ի՞նչ հարկ կար ուշա
ցունելու երբ եկող Պատրիարքը անձնիշխան կառա
վարութիւն չունի, երբ Միաբանութեան խոր
հուրդներովը պիտի վարէ իւր իշխանութիւնը, ի՞նչ
հարկ կար կսենք, երբ Միաբանութիւնը իւր կամքը
Ազգին բարի կամացը միացուցած կը տքնի աշխա
տութեամբ ՚ի գործ դնել ինչ որ արժան է . ինչո՞ւ
չէք բարեհաճիր Միաբանութեան ներկայացուցած
ները Պատրիարք վաւերացունել, որով տեսնաք և
վայելէք մեր ջանից արգասիքները, եթէ նուրբ նա
խատեսութի մը ձգենք ապագային վրայ, զանազան
տարածայնութիւններէն պիտի տեսնանք որ տեսակ
տեսակ շփոթութիւններ դուրս գալով՝ խռովու
թիւնը պիտի շատնայ . և եթէ ներելի է մեզ հա
մարձակ և ազատ խօսիլը, ասոնց ամէնը ժամանա
կին և պարագային յարմար չի շարժելէդ տեղի պի
տի ունենայ . ուստի լաւ դիտեցէք մեր սիրաը և բա
րեհաճեցէք որ յառաջ Միաբանութեանս խնդիրը
կատարել . որով դուք ալ պիտի զգաք անոր այսչափ
ուշանալէն ծագած վնասը :

Կը յուսանք որ մինչև հիմայ կարող եղանք մեր

սիրտը, մեր կամքը, և զգացմունքը Ազգինին հետ
 նոյն ըլլալը բացայայտ հակըրցունել. վստահ եմք որ
 ձեր բարի կամաց հակառակ բան մը չունենանալուս
 վրայ համոզուեցաք. ուրեմն ըսէք Մեղ-ին որ ալ դա
 դարի Ազգին և Միաբանութեան պատիւը աղար-
 տելէ. թէ որ խօսելու նիւթ չունի, թող Փարիզ
 Լրագրոյն 42, 43, 44, և 45, թիւերը ուշադրու-
 թեամբ կարդայ, ուր պիտի գտնայ նամակներ, Ազ-
 գային խնդրոյ մը վերաբերեալ դիտողութիւններ, և
 ուրիշ նիւթեր, որ արդարև Ազգին ուշադրութեան
 և հետաքրքրութեանը արժանի են. ի՞նչ կը հասկը-
 նայ սուրբ Երուսաղէմայ վանքին կից արձակելէն և
 չարաչար վիրաւորելէն. որուն օրինակին հետեւելով
 հիւսիսափայլին Արգոյ հեղինակը, սոյն անարատ մի-
 աբանութիւնը Վանյի Պօղոսին, և Նիկողայոս Եպիսկոպոսին
 կարգը կը դասէ, իւր երկու տող ըսուած տետրա-
 կին մէջ. որն որ յայտնի է թէ բնաւ ստոյգ տեղե-
 կութիւն մը չունի մեր ոչ նախկին, և ոչ այժմեան
 վիճակին, և կացութեանը վրայ. այլ Մեղ-ի և իր
 կամակիցներուն օրինակին հետեւելով կը խօսի, բայց
 կը հարցունեմք ազգասպանութիւն է թէ ոչ. ի՞նչ
 կը հասկընան այլ և այլ ռամիկ կամապաշտ մարդկանց
 խօսքին հետեւելով զուր տեղը կը նախատեն և բա-
 րոյական պատիւը կ'աղտեղեն. բայց ըսէք սոյդ խո-
 վայոյ Մեղ-ին և հասկըցուցէք որ շատ խօսելով չի
 կրնար արդարանալ, հապա, աւելի կը մեղադրուի,
 չի հաւտար նէ, թող իմաստունին հարցունէ, «Շա-
 տախօս լինելով ոչ զերծցիս 'ի մեղաց, եթէ խնայես
 'ի շրթունս քո իմաստուն լինիս. Ա-ակ. Ժ. 10: կը-
 ցաւ ինք արդարև Մեղ-ին, անզգոյշ շատախօսութե-
 ր վրայ, և լեզուին ցոփութեանը որ շարունակ անձը
 վտանգի և անունը ապականութեան մէջ է, կը ցա-

ե ինք նաև որ չուզէր բնաւ ճշմարիտ իմաստութեան դիմելու, որ զինքը անստերիւր գիտութեան և պատուոյ կառաջնորդէ. ուր ոչ սխալմունք և ոչ գայթակղութիւն կայ, ուր մարմնոյն և հոգւոյն փրկութիւնը պատրաստուած է. հոն՝ շատ օգուաններ կրնայ գտնալ թէ իրեն և թէ ընդհանուր Ազգին համար. որուն (կարծեօք) կը ցանկայ բարիք մը ընել. բայց այս ընթացքով՝ եղևկ իրեն որ կը խոցի ու չըզգար, կը կործանի ու չիմանար. «Իմաստունն որտիւ ընկաւցի զպատու իրանս, և ցոփն չըթամբք գայթակղելով կործանեսցի». Առաջ. Ժ. 8:

Վասն որոյ ո՛ր Ազգախնամ բարերարք՝ գթացէք այդ խեղճին վրայ, և խրատեցէք զինքը. մե՛ղք է, ափսոս է, ՚ի սէր մարդացելոյն Յիսուսի և ՚ի պատիւ Ազգութեան, ալ հերիք է, ինչո՞ւ ակնառութիւն կը նէք. Չեղի տրուած է ստահակ ամբարիշտները խրատել յանդիմանել և սաստելը. այս անհրաժեշտ պարտուց զանցառութիւն ինչո՞ւ կրնէք, քանի որ Առաքեալը կաղաչէ ստահակները հակառակողները խրատելու. «Մղաչեմ զձեզ եղբարք խրատել զստահակս». Ա. ԹԻՄԱՊ. Ե. 15: Հանդարտութեամբ խրատել զհակառակողն, և այն. Բ. ՏԻՏ. Բ. 24, 25. ալ ինչո՞ւ անիոյթ կըլլայք: Ազգին ընդհանրութիւնը, և անոր ամէն մէկ անհատը այնպէս գիտեն որ գուք իրենց օգտին և պատուոյն համար իշխան եղած էք՝ ինչու որ ամէն մարդ իր օգուտը Չեզմէ ընդունելու ակրնկալութիւնը ունի. ու թէ որ մէկէ մը վշտանան, իշխանէն օգնականութիւն կը յուսան. իսկ իշխանը իր հպատակները իր մէջը ունի և անոնց վրայօք հոգալ կը պարտի. այսու իրաւամբ կը բողոքենք և մեք ընդհանուր կառավարութեան Ազգին որ օր յառաջ մեր խնդիրը լըմնցունէ:

Ապրիլին ո՛ր Տեարք, վստահ պիտի ըլլանք Աստու-
ծով որ ուրիշ անգամ այս նիւթիս վրայ գրելու չի
պիտի ստիպուինք . ալ վստահ ենք որ ձեր Բարեխը-
նամ տեսչութիւնը ազգասիրաբար պիտի բարեհաճի
հոգալ ինչ որ ժամանակը և պարագայն կը պահանջէ ,
որով պիտի պատճառ ըլլաք բառնալու զանազան սա-
րաձայնութիւնները և կարծիքները :



ԽՆԴԻՐ ԵՐՐՈՐԳ

Մասիս Պատրաստական Լրագրոյն Արժանայարժ Կեդինակին
Դիւ յխալ կարծեայ Բացաբրո-վի-նը :



Բերան արդարոյ խորհի
զեմաստուծիւն , և ըզու
նորա խօսեացի զերուսուս .
Մաշ. Լ. Զ. 30 :

Արդարեւ մենք կը ճանչնանք որ մեր միութեան
մէջ մէկուն պակասութիւնը ընդհանուրին կը վերա-
բերի . բայց ըստ որում ճշմարտութիւնն ալ ծածկե-
լը արժան չէ , անոր համար հարկ սեպեցինք որ ան-
կողմնասէր ոգւով բացատրենք այն սխալ կարծիքը որ
ըրած էր Մասիս Լրագրոյն Պատուարժան հեղինակ
կը՝ ՚ի պատիւ հանգուցեալ Սրբազան Հօր , որուն
համար արդարեւ չափազանց է այդ կարծիքը :

Այսպէն Մասիսի Պատուարժան հեղինակը մեր
Միաբանութեան մէջ գրել կարգալ չի գիտցող գըտ-
նալէն վերջը , Հանգուցելոյն ձեռնադրածներէն ըլ-
լալ կը կարծէ . սակայն Հանգուցելոյն ձեռնադրած-
ներուն մէջ այդպիսի անձ մը չի կայ . կը մեղանչեմք
երբ այս մասին Հանգուցելոյն վրայ աւելորդ կար-
ծիք կընենք , զինքն ալ չենք մեղադրեր , որովհետեւ
այլ և այլ տարաձայնութիւններէն ՚ի հարկէ կընայ
հետեցունել ասանկ կարծիք մը , ինչպէս որ բնական
է ամէնուն . բայց Լուսահոգւոյն ձեռնադրածները
ժամանակին ըստ կարեաց ուսմունքնին առած ըլլա-
լով , գրեթէ բոլորն ալ ուսումնասէր են , որոնք յու-

սամբ թէ՛ եթէ ոչ ամէնը, գոնէ կեսէն աւելին Ազգին ծանօթ են, և որոնց գործը և եռանդը յայտնի սպառնաց կեն իրենց ուսումնասէր բարուցը. ինչպէս նաև միւս ամէնքն ալ:

Ահա՛ աւարտելով մեր խնդիրներուն քննութիւնը որով և Ազգին կառավարութեան ըրած բողոքնիս, կը կնքենք խօսքերնիս՝ սպասելով Աստուծոյ մարդասէր սյցելութեանը՝ և Ձեր կամաց բարի հաճութեանը:



ՅԵՒԵԼՈՒԸՍ

Թէպէտ խօսքերնիս կնքած և մտադիւր պիտի սպասէինք ընդհանուր Դողովոյ պատասխանին և որոշմանը. բայց դժբաղդաբար այս կետիս էր՝ երբ ընդունեցինք Մեղ-ի՛ն Ապրիլ 20 թիւն ալ որն որ (չենք գիտէր ուրկէ՞) նոր ոգի առած վերստին վատաբանութեամբ կը բանդագուշէ և զանազան՝ ստասպատիր իմաստակութեամբ՝ իւր վատ կիրքը յառաջ տանել կը ճգնի. բայց ս՛վ թշուառութեանս, այս ի՛նչ տարօրինակ ձայներ են որ մեր ականջին թմբուկները կը պատուեն. ս՛վ ընդհանուր Ազգային Կառավարութիւն. դեռ կը ննջե՞ս, չենք գիտեր թէ մեր ձայնը չազգեր, չէնէ Ասեմութիւննիդ գիտմամբ չէք ուզէր լսել. բայց այս անմեղ Միաբանութեան հեղիկ ձայնը որ մը լսելի պիտի ըլլայ անշուշտ ս՛հ երանի թէ շուտ լսուելու բարեբաղդութիւնը ունենայինք. այլ աւանդ, քանզի վայրասպար եղաւ մեր իրաւացի բողոքը. չի լսեց Ազգախնամ Կառավարութիւնդ մեր օխուր ձայնը, անտես ըրաւ մեր արտասուքը. և սրտերնուս ցաւը կրկնատատկելու համար,

Թոյլ տուիք ողորմելոյ մը, որ անողորմաբար մեր վերայ յարձակի. վասն որոյ կը համարձակիմք ըսելու թէ՛ Ազգախնամ տեսչու թիւնդ չի կրնար կերպով մը այս մասին արդարանալ. ըստ որում ընդհանուր Ազգի մը կառավարութեան իշխանութիւն կը կրէք. ինչպէս անհատի մը խօսք չէք կրնար հասկըցունէր:

Մեր Միաբան լրութեան մէջ չիկայ սիրտ մը որ կարելէր խոցուած չըլլայ Մէլը-ի անպատկառ զրախօսութենէն. ուստի ցաւօք սրտի ելանք բողոքեցինք ձեր արդարախոհ Ատենին, յուսալով որ մեր դիւրազգաց սրտին խոցը բժշկելու սպեղանի մը կը շնորհէք. այլ աւանդ, սնոտի յոյս. քանզի կը տեսնանք որ Վարչութեան Թոյլտուութեամբը, Մէլը-ն ազատօրէն կը մտնայ Պատրիարքարան՝ քաղաքական ու խառն Ժողովոց ատենագրութիւնը քրքրելու արգելք մը չունենար*. ասով կերևի թէ՛ Ազգին Վարչութեան կողմէն ազատ արտօնութիւն ունի ինչ որ ուզէ ընելու. ահա՛ այս արտօնութեամբ է որ այս անգամ ալ կը յանդգնի անողջմտութեամբ բերնին եկածը դուրս տալ, որուն համար ժամանակնիս չը ներէր երկարօրէն խօսիլ. բայց միայն կետի մը վրայ պիտի խօսինք. այսինքն է մեր ըրած քուէարկութեան վրայ՝ զոր ապօրինաւոր կը դատէ Մէլը-ն. և որուն լուրը՝ Վարչութէն առած (մեջուխեջայի) կեղծիքով մեզ կիմացունէ. ուստի անհրաժեշտ պարտք կը համարիմք ճիշտ և մանրամասն նկարագրութեամբ հրատարակել ՚ի միամտութիւն ընդհանրութեան. աղաչելով որ ուշադրութեամբ կարդայ և տեսնայ թէ՛ սուրբ Երուսաղէմայ Միաբանութիւնը իր քուէարկութիւնը գաղտնի ըրած է և ոչ յայտնի, որով

* Մեր ամէն խօսքերը Ազգային քաղաքական և խառն Ժողովոց ատենագրութենէն քաղելով, և այն. Մէլը- Ազգի 10:

պիտի համոզուիք թէ աղօրինաւոր չենք ըրած, պիտի զգաք նաև որ հոս բնաւ խարդախութիւն չիկայ. քանզի խարդախութիւն չենք գիտեր որ ընենք:

Գաղտնի քուէարկութեամբ երեք անուն որոշելու համար, Մարտ ամսոյ քսանին երեկոյեան ընթրիքէն վերջը սովորական կոչնակը զառնելով սուրբ Յակովբայ Հրաշակերտ Տաճարը ժողովեցանք ընդհանուր Միաբանութեամբ. ուր հանգստեան աղօթքէն վերջը՝ Հանգուցեալ Սրբազանին Հոգւոյն համար ջերմեռանդ սրտիւ պաշտօն մատուցինք. վերջը առ ժամանակեայ տեղապահ սուրբ Հայրը Գործք առաքելոցի Ա. գլուխը կարդաց. Խոստովանահայրն ալ Մատթէոսի Աւետարանը կարդաց, ուր տեղ Սրբազան Առաքելոց ընտրութիւնը և կոչումը նշանակուած է. յետոյ ատենանին մէջ ծունկի վրայ եկած գլխաբաց, ողբաձայն Տէր ողորմեա ըսելով՝ Ամենակալ Բարերար Աստուծոյ, մեր Հայոց՝ օրհնեալ Ազգին պայծառութիւնը, և գործոց բարի յաջողութիւնը, և Միաբանութեանս յառաջագիմութիւնը մաղթեցինք, ու ներկայ գործոյս ալ Աստուծոյ առաջնորդութիւնը խնդրեցինք՝ սուրբ Աթոռոյս շինութեան և պայծառութեանը համար. վերջը ոտքի ելլալով երկու Վարդապետ Սաղմոսին ՁԹ. գլուխը մինչև վերջը կարդացին: Այս ամէն բարեպաշտ և ջերմեռանդ արարողութենէ վերջը ընդհանուր միաբանութեան առջև Սրբազան Հօր և ընդհանուր Ժողովոյդ հրամանագիրը կարդացուեցաւ. յետոյ ծերունազարդ տեղապահ սուրբ Հայրը Ազգը օրհնելով մեր պարտաւորութեան համեմատ մեզի հնազանդութիւն քարոզելով՝ հրամայեց որ ամէն մարդ իր խղճմտանաց վկայութեամբը սուրբ Աթոռս կառավարելու արժանաւոր որը որ կուզեն պատրաստեալ

Թղթիկներուն վրայ ամէն մէկը առանձին գաղտնի գրեն և տանին մեծ Առաքելոյն Յակովբոսի արիւնք մած սուրբ Գլխադրին տեղը ձգեն . և երբ հարցուեցաւ թէ Վանքին մէջ գտնուող վարդապետաց անունը միայն պիտի գրուի , այն ատեն ըսինք որ Պօլիս գտնուող Փոխանորդ Արժանապատիւ Իսահակ վարդապետ՝ և պատգամաւոր Յակովբ վարդապետ սուրբ Հարք* ևս պիտի գրուին , նոյնպէս սուրբ Աթոռին գործով հեռաւոր տեղեր գտնուող Տեսուչ վարդապետներն ալ . ուստի Վարդապետ մը ատեալնին մէջ տեղը կայնած կարգաւ եկողին մէկ թուղթ կուտար , որն որ առնողը առանձին իւր մտքին որոշածը կը գրեր կը ծալէր ու ջերմեռանդութեամբ կը ձգեր սուրբ Գլխադրին վրայ , այս կերպով ամէն մարդ լրանալէն վերջը երկու Խոստովանահայր վարդապետք ակնածութեամբ մտնալով այն սուրբ Մատուռին մէջ դուրս հանեցին քուէին թուղթերը , ու բերին Տեառնեղբայր Արդար Առաքելոյն շիրմին և Աթոռին առջևը , ընդհանուր Միաբանութեան ներկայացուցին , ուր քուէ համարը ընելով՝ տեսնէք որ քուէ առած էին Արժանապատիւ Իսահակ վար . 64 : Յակովբ վար . 7 : Եսայի վար . 7 : Դոմէաս վար . 4 : Պետրոս վար . 3 : Սպեհան վար . 1 : Պօղոս վար . 1 : Սարկոս վար . 1 : Ընտանաս վար . 1 : Սիմեօն վար . 1 :

Ահա մեր գաղտնի քուէարկութեան մէջ այս տասը հոգին քուէ առին , որոնց մէջէն առաւելա-

* Դժբաղդաբար Ազգին կառավարութե գրուած նամակին մէջ այս կետը լաւ բացատրուած չըլլալուն , և առանց ուշադրութեան մեծ և յայտնի սխալ ըլլալուն իրաւունք ունեցաւ Վարչութիւնը նորէն քուէ պահանջել . բայց ըստ որում մարդ ենք , աճապարանօք լաւ ուշադրութիւն չենք կրցեր ընել այդ կետին , ուստի կը խոստովանինք որ գործողութեան համեմատ գրուած է և սխալ է , ասոր ամէն մարդ կրնայ վկայել :

գոյն առնողները որոշելով Ազգախնամ Կառավարու-
թեանդ ներկայացուցինք, աւելորդ սեպելով միւսնե-
րուն անունը. բայց մեր պակասութիւնը հոս է որ
ամէնուն անունը չի գրեցինք, որով տեղի ունեցաւ
այսչափ կարծիքներ. արդ որովհետեւ այն ատեն մեզի
քուէարկութիւն ընելու հրահանգ տրուած չէր.
միայն գաղտնի պիտի ըլլայ ըսուած էր խրկած նա-
մակնուդ մէջ, ասոր համար մենք ալ այս կերպով
գաղտնի ըրինք. և Աստուծոյ առաջնորդութեամբը
գործադրեցինք անխարդախ զոր և ընդունեցինք,
վստահ համոզուած ըլլալով որ մեր ըրածն ալ ապօրի-
նաւոր չէ, ուստի կաղաչեինք որ առանց այլ և այլ մը-
տածութեան ըստ յայտնութեան Աստուածային կա-
մաց լրմնցունենք օր յառաջ մեր գործը :

Ահա մենք քուէարկութեան ճիշտ նկարագրու-
թիւնը ընենէս վերջը, բանի մը համառօտ դիտողու-
թիւն կընենք Պարոն Մեղուի ուրիշ խօսքերուն և կը
վերջացունենք :

Վ սեմաշուք Տեարք, Մեղուն իրեն վայելուչ Խա-
րախո-իւն բառը, որ անարժան կերպով սուրբ Երու-
սաղէմոյ տան վըայ դրած էր. այս անգամ ետ կառ-
նէ հոնկէ և կը բերէ սուրբ Երուսաղէմայ անարատ
ուխտին վըայ հանգչեցունել կը ճգնի. ուստի առանց
երկար խօսելու, կըսենք որ մենք այդ բառը ընդու-
նելու տեղի չունինք, մեր ստորագրութեանց մէջ
խարդախութիւն չիկայ. որուն ստորագրութիւնը որ
իր ձեռքովը դրուած չէ, և փոխանորդով դրուելուն
տհաճ էնէ՝ թող բողոքէ, այն ատեն մենք ալ հոգևոր
կասպակցութեց մէջ իր տուած խոստմունքը կը ներ-
կայացունենք իրեն. Մեղուն ալ կը տեսնայ որ հոս Խա-
րախո-իւն չիկայ, հիմակուրնէ խօսքը ետ կառնէ և
իրմէ արժանաւորը չի գտնալով իր վըայ կը պահէ :

Սուրբ Երուսաղէմէն եկած ճասնաւոր նամակներ յիշեշով
կուզէ իւր խօսքերը հաստատել . որով և հասարակ
կութեան միտքը շփոթել, ուրկէ կը ծագի խռովու-
թիւն, ատելու թիւն, և երկպառակու թիւն : Կուզէ-
ինք գիտնալ թէ այդ ճասնաւոր նամակները որո՞ւ հեղի-
նակու թիւններն են, ո՞ր խառնակիչ չար ոգւոյ պը-
տուղն է, որ այսքան խռովութեան և տարաձայնու-
թեան առիթ կը լլան կոր . կը փափաքինք արդարև
գիտնալ ատոնք յականէ յանուանէ, որպէս զի մենք
ալ յայտնի պէտք եղած տեղեկու թիւնը տանք . այն
գործը որ ճշմարիտ է չի կրնար թագչիլ, ուրեմն այդ
նամակներուն հեղինակները ինչո՞ւ իրենք զիրենք վա-
տու թեամբ կը սպհեն, յայտնի է որ սուտ՝ և խռ-
վիչներ են և միութեան հակառակ : Հոս գրել չի
գիտցող վարդապետ ըլլալուն չըլլալուն վրայ քիչ մը
յառաջ բացատրած ենք . բայց հիմայ Մեղն յան-
դրգնաբար կըսէ թէ, ի՞նչ կընեն այդ վարդապետները լի
ապո՞ր իո՞պեն . Մեղն-ին ըսէք որ իր չափը ճանչնայ,
մենք ամէն ատեն փողով կանչելու չենք մեր գործը .
մինչև հիմայ ինչ էր պարտաւորութիւննիս՝ զայն ան-
թերի կատարած ենք և կը կատարենք . իրեն բերնին
չափը չէ՛ մեղի ապո՞ր իո՞պեն ըսելը . բայց մենք դար-
ձեալ անյիշաչարութեամբ կը ներենք՝ աղօթելով որ
իր չափը և պարտքը ճանչնայ : Պարոն Մեղն չի պի-
տի ուզէ եղեր ըսել թէ Երուսաղէմ՝ Գրէլ չէ Գիպոյղ
վարդապետ իայ . (աս ալ ՚ի պատիւ Ազգին և նոյն Միա-
բանութեան) զոր յարգել իլ պարտի . ս՛վ խաբէութեան,
ի՞նչ ստու թիւն և ի՞նչ պատրուակ . ատով միտքեր-
նիս մոգե՞լ կուզէ, կը կարծէ որ իւր զըպարտու-
թիւնները և վատաբանութիւնները մոռցանք . զորս
գրած ատենը բնաւ չի յիշեց իւր յարգանայ պարտքը .
և հիմայ ամէն խորհուրդը արտադրելէն վերջը լեզ-

ւով միայն (յարգել կը պարտի) : Արդ խարտախո-
րուն ըլլալը կարծենք՝ թէ ինքն ալ ճանչցաւ . Մե-
ղուն չի կրնար պարզ խոստովանիլ՝ որ գրածները սուս
ու սխալ կարծիքներէ և չարագրգիռ աղբիւրներէ
յառաջ եկած էին . այս կերպով կուզէ քողարկել .
բայց չի գիտեր որ բացուած վէրքը անբուժելի է ,
ամէն հնարք անօգուտ են , մէկ հատիկ հնարքը ա-
մէնայաղթ ՄԵՂԱՆ է :

Ընդէ հնարից Մեղուն, տեսէք ինչ կը սովորեցու-
նէ մեր պարզամիտ Միաբանութեան . Տէլ կամ Երի-
վարդապետ Ֆելիքի գալով Բոլոր Միաբանո-
ւթեան Բան մը չէ՞ն իրնար խնդրել Ազգէն և այլն : Սենք բըռ-
նութիւն մը չունինք . այդ ընելիք խնդիրը թէ որ օ-
րինաւոր է՝ թող նախ Միաբանութեան տան , և թէ
որ գոհացուցիչ պատասխան չառնեն՝ ազատ են Ազ-
գին խնդիր տալու . իսկ թէ որ ապօրինաւոր է՝ վըս-
տահ ենք որ Ազգը անիրաւութեան պաշտպան չէ :

Արեմն երբ մէկը առանց ընդհանուրին գիտու-
թեան նամակ կը գրէ , և երբ մէկ կամ երկու վար-
դապետ առանձին խորհուրդ ընելով ուրիշ անձի մը
ընտրութիւն կը խնդրեն , ըսել է թէ պարզապէս
միութեան մէջ շփոթութիւն և երկպառակութիւն
ձգելու կը ճգնին . ատանկներուն լսելը և խօսքեր-
նին բանի տեղ դնելը խոհեմութիւն մը չէ :
Իայց մենք չենք կարծեր որ ատանկ մէկը ըլլայ մեր
մէջը , ինչու որ ատանկ ընելու առիթ տուած չենք
բնաւ . առանց պատճառի հակառակող սիրտն ալ
դուք կրնաք դատել թէ որո՞յ հոգւոյ է : Մեղուն կու-
զէ որ ամէն ստորագրութիւն դրուած ատեն , բա-
ցակայ վարդապետները ներկայ գտնուին . այդ ան-
հնար բան է հոստեղին համար . ըստ որում Գամաս-
կոս , Պերութ , Յոսպէ , Ռէմլէ , Բեթլէհէմ , գտնը-

վող տեսուչները անմիջապէս ամէնքը 'ի մի հաւա-
քել անկարելի է . և որովհետեւ ընդհանուրին որոշ
մանցը հաճութիւն տուած և համակրութիւն խոս-
տացած էին , ուրեմն անպատեհ չէր անոնց ստորա-
գրութիւնը գրուիլը . և հոս ատոր համար վէճ մը
եղած չէ . ահա այս կերպով ըլլալէն վերջը չի կրնար
և ոչ մէկը առանցին խորհորդ խալմէ և որիչի ընդդո-
միւնը խնդրել . Մեղան ալ իրաւունք չունի ըսելու թէ (մէկ
քանի վարդապետ խորհուրդ ըրեր և ուրիշներն ալ
իրենց խորհուրդին ծառայեցուցեր են) . ըստ որում
ամէնքն ալ մեր ընդհանրութեան համախոհ են . ու-
րեմն կը պարտաւորի Մեղան հաւատալ թէ հոս խար-
դախութիւն չիկայ . այն ուրիշի ձեռքով ('ի պահան-
ջել հարկին) ստորագրութիւն կը գրուի անունին
տիրոջը հաւանութեամբը և խարդախութիւն ու
կեղծիք չըլլար . ասոր կուզէ նէ Մեղան թող հաւա-
տայ և համոզուի , կուզէ նէ դարձեալ նոյն համա-
ուութեան մէջ թող մնայ , ատ մեր հոգը չէ . միայն
մենք ուրախ ենք որ պարկեշտութեամբ և ուղղու-
թեամբ մեր ընթացքը ծանուցինք ընդհանուր Ազ-
գին . ուրախ ենք նաև որ Մեղան իւր գրածը ամ-
բաստանութիւն ըլլալը կը ճանչնայ և ետ կտանէ .
թէպէտ ուրիշ տեղ ձգելու փորձ ըրաւ , սակայն չի
յաջողեցաւ . ուրեմն ալ բոլորովին թող ետ առնէ
և իր վրայ պահէ . քանզի հոս այդ վատ տիտղոսը կը-
րելու արժանաւոր մարդ չի կայ :

Մարդիկ իրենց ուտելիքը խըմելիքը լաւ կնտրեն .
իսկ խօսքերնին ինչո՞ւ բնաւ չեն ուզեր ընտրել .
մարդկութեան վայլածը այն է որ նկատէ թէ խօսաւ
ծը ըլլայ բարի , ընտիր , օգտակար , և մարդկութեան
արժանի . կերակուրի ընտրութիւնը ամէն զգայուն
ալ բնութեամբ՝ մեզ նէ աղէկ կրնեն :

Կը զարմանամք թէ մարդիկ ինչո՞ւ իրենց վայլա՛ծը օրինաւոր 'ի գործ չեն դներ . ստուծիւն, խարդախուծիւն, կամապաշտուծիւն, անարժան խօսակցուծիւն . ամէն տեսակ ամարդի գործերը այժմ մարդկանց վրայ կը տեսնուի . մէկը իր կամքը յառաջ տանելու համար, մէկէն փոքր զրկանք մը կը բաժին պէս՝ ուր որ նստի խղճին դէմ կըսկսի ծանր ամբաստանուծիւններ ընել, անուն արատել, կոտրել և այլն . ունկնդիրն ալ, (խեղճ ողորմելի,) կը լսէ քաղցրուծեամբ, կը հաւատայ, և կըսկսի նոյն ամբաստանեալին դէմ ատելուծիւն բանեցունել անպարտ տեղը, երանի՛ թէ քիչ մը արդար դատողուծեամբ քննուծիւն ընէին և կը տեսնային որ նոյն ամբաստանողը իր բնուծիւնը նկարագրած է, և դիմացինին վրայ պարզ ստուծիւն մնէ . ասանկ ստախօսները իրենց ունկնդիրներէն պատիւ ստանալու համար կընեն . բայց կը նմանին շողոտ ժժմակի (սիւմիւկ պէօճէի) որ գիշեր ատեն ուր որ սողայ ետեւէն արծաթեայ հեղանիւծի պէս փայլուն գիծ մը կը ձգէ . արդ՝ ի՞նչ խենդ մարդ ըլլալու է որ անկայ արծաթ կարծէ, անանկ է նէ ստախօսները և սընապարծ կամապաշտները թող չի կարծեն թէ մարդիկ իրենց ստուծիւնը չեն հասկնար . այն շատ աղէկ կը հասկընան, և այն պատուին ու համբաւին տեղը, որուն ակնկալուծիւն ունէին, անարգանք ու անպատուուծիւն կը ստանան :

Արեւմն ո՛ր Ազգախնամ բարերարք, կը խնդրեմք խոնարհաբար որ ամենայն հոգւոյ չի հաւատօք . այլ հոգիները ընտրէք և ուղիղ դատաստան ընէք, և զուր տեղը չի վշտացունէք անձնանուէր մշակներու վաստակեալ սիրտը :

Ահա՛ մենք ճշմարտութեամբ և պարզմտութեամբ առանց ծածկելու, ամէն բան Ազգին վսեմ Կառավարութեանդ հրապարակաւ յայտնելնէս, հեղութեամբ և անձին ծանօթութեամբ ակամայ և անբզգոյշ սխալմունք մը խոստովանելնէս վերջը՝ ալ չենք կարծեր որ բարեխնամ Կառավարութիւնդ վերստին չի բարեհաճի գործադրել սուրբ Երուսաղէմայ խընդիրը, չենք կարծեր որ ուշադրութիւնը քնացունէ ժամանակին վտանգաւոր պարագային վրայ, այլ՝ ընդհակառակն վստահութեամբ պիտի հաւատանք որ խոհեմութեամբ և ամենազգոյշ նախատեսութեամբ ապագայն գուշակելով պիտի հաճի այս անգամ օրինաւոր կերպով սուրբ Ելմայ Պատրիարքը որոշել:

Արանի թէ Աստուծոյ ողորմութեամբը ալ վերջանար այս ծանր՝ բայց կարեւոր խնդիրը, Աստուած տան որ ձեր Վսեմ բարերարութիւնը լսեր մեր տըխուր ձայնը և որչափ կարելի է փութայր ժամ յառաջ մեր սիրտերը հանդարտեցունել որ շարունակահոս գողի մէջ է թշնամեաց անիրաւ և անակրնկալ արշաւանքներէն: Ապաքէն խոհեմութիւնը կըստպէ մեզի որ ամէն ըրածնիս՝ տեղւոյն, ժամանակին, և պարագային յարմար ըլլայ. որպէս զի գործը օգտակար հանդիսանայ, եթէ ոչ՝ անօգուտ կըլլայ. ուրեմն ո՛ր բարեջան Վեհազունք՝ դուք նկատեցէք տեղւոյն պահանջմունքը և բուն պէտքը տնօրինեցէք, մնացածը մեզի ձգելով վստահ եղիք որ ըստ արժանւոյն պատրաստ եմք ամէնքնիս ալ ձեռքերնուս եկածին չափ աշխատիլ. այսուհետեւ բարեկարգութիւն, յառաջադիմութիւն ընելու դժուարութիւն չիկայ. միայն կամք մը կուզէ՝ և այն ալ արդէն ունինք, և օրտի հանգստութիւն մը՝ որ դեռ բնաւ չունինք:

Ահա Ձեր խորհելիքը և ահա Ձեր նախնական գործը, եթէ հիմա Պատրիարքը ընտրուած ըլլար՝ անշուշտ ամէն բան ալ հանդարտ սրտով և այլ յաջողութիւն կատարած պիտի ըլլար. ըսել է թէ՛ անոր ուշանալէն յառաջ կուգայ բոլոր թերութիւնները գործոց տարտամութիւնը, և որ մեծն է զանազան տարածայնութիւն և երկպառակութիւնները. ուրեմն թող բարեհաճի արդարախոհ Առաւմարութիւնդ լսել մեզ, և շերկարցունել գործը, հաւատացէ՛ք կաղաչեմք հաւատացէ՛ք մեզի և ընդունեցէ՛ք մեր սրտին բարի զգացմանց անկեղծ հաւաստիքը, ընդունեցէ՛ք նաև մեր խնդիրը ճանչնալով՝ ճշմարտութիւն մեր սիրտը, մեր անկեղծութիւնը. և մի թողուք որ մարի այս մեր սրտին բորբոքեալ կայծը ՚ի մասին լուսաւորութեան և յառաջադիմութեան: Այս այս եռանդը արծարծելու միջոցը խորհելու է. թող չի կարծէ Ձեր Ասեմութիւնը որ Պատրիարքը ընտրուելէն վերջը մենք պիտի լռենք և անհոգ պիտի մնանք, այդ անկարելի բան է մեզի համար. մենք՝ մինչև մեր վերջին շունչը պիտի աշխատինք սուրբ Աթոռին ապագայ վիճակը բարելաւցունել. բայց նախ Պատրիարքի ընտրութիւնը խնդրեմք, որով միայն կրնան լրանալ ամէն մեծաւ մեծ գործերը. որոնց կը ցանկայ Միաբան լրութիւնս և օրհնեալ բարեպաշտ Ազգը:

Ահա մենք սյուշափ խօսելէն և բողբոքելէն վերջը ալ կը լռենք առժամանակ մի մինչև Աստուծոյ բարի կամքը հաճի մեր վրայ. որով միայն պիտի կրնայ կատարիլ սուրբ Երուսաղէմայ գործը, անատենը մեր յասուկ շնորհակալութիւնը և երախտագէտ սրտին զգացմունքը հրապարակաւ պիտի յայտնենք, առայժմ կը մնամք սիրելի Ազգայնոց և Ընդհանուր ժողովուրդի մէջ:

ղովոյ պատասխանին և որոշմանցը ակնդէտ և պարտաւոր բարեմաղթու 'ի Սրբազան վայրս վասն անդորրու թեան և յառաջադիմութեան Ընդհանուր օրհնեալ Ազգիս .

Համալսման և անխնայանքի ընդհանուր
Միաբանութիւն սորբ Ուխտին
Երոստաղէօ :



INDEX

1	Introduction	1
2	Chapter I. The History of the	2
3	Chapter II. The History of the	3
4	Chapter III. The History of the	4
5	Chapter IV. The History of the	5
6	Chapter V. The History of the	6
7	Chapter VI. The History of the	7
8	Chapter VII. The History of the	8
9	Chapter VIII. The History of the	9
10	Chapter IX. The History of the	10
11	Chapter X. The History of the	11
12	Chapter XI. The History of the	12
13	Chapter XII. The History of the	13
14	Chapter XIII. The History of the	14
15	Chapter XIV. The History of the	15
16	Chapter XV. The History of the	16
17	Chapter XVI. The History of the	17
18	Chapter XVII. The History of the	18
19	Chapter XVIII. The History of the	19
20	Chapter XIX. The History of the	20
21	Chapter XX. The History of the	21
22	Chapter XXI. The History of the	22
23	Chapter XXII. The History of the	23
24	Chapter XXIII. The History of the	24
25	Chapter XXIV. The History of the	25
26	Chapter XXV. The History of the	26
27	Chapter XXVI. The History of the	27
28	Chapter XXVII. The History of the	28
29	Chapter XXVIII. The History of the	29
30	Chapter XXIX. The History of the	30
31	Chapter XXX. The History of the	31
32	Chapter XXXI. The History of the	32
33	Chapter XXXII. The History of the	33
34	Chapter XXXIII. The History of the	34
35	Chapter XXXIV. The History of the	35
36	Chapter XXXV. The History of the	36
37	Chapter XXXVI. The History of the	37
38	Chapter XXXVII. The History of the	38
39	Chapter XXXVIII. The History of the	39
40	Chapter XXXIX. The History of the	40
41	Chapter XL. The History of the	41
42	Chapter XLI. The History of the	42
43	Chapter XLII. The History of the	43
44	Chapter XLIII. The History of the	44
45	Chapter XLIV. The History of the	45
46	Chapter XLV. The History of the	46
47	Chapter XLVI. The History of the	47
48	Chapter XLVII. The History of the	48
49	Chapter XLVIII. The History of the	49
50	Chapter XLIX. The History of the	50
51	Chapter L. The History of the	51
52	Chapter LI. The History of the	52
53	Chapter LII. The History of the	53
54	Chapter LIII. The History of the	54
55	Chapter LIV. The History of the	55
56	Chapter LV. The History of the	56
57	Chapter LVI. The History of the	57
58	Chapter LVII. The History of the	58
59	Chapter LVIII. The History of the	59
60	Chapter LIX. The History of the	60
61	Chapter LX. The History of the	61
62	Chapter LXI. The History of the	62
63	Chapter LXII. The History of the	63
64	Chapter LXIII. The History of the	64
65	Chapter LXIV. The History of the	65
66	Chapter LXV. The History of the	66
67	Chapter LXVI. The History of the	67
68	Chapter LXVII. The History of the	68
69	Chapter LXVIII. The History of the	69
70	Chapter LXIX. The History of the	70
71	Chapter LXX. The History of the	71
72	Chapter LXXI. The History of the	72
73	Chapter LXXII. The History of the	73
74	Chapter LXXIII. The History of the	74
75	Chapter LXXIV. The History of the	75
76	Chapter LXXV. The History of the	76
77	Chapter LXXVI. The History of the	77
78	Chapter LXXVII. The History of the	78
79	Chapter LXXVIII. The History of the	79
80	Chapter LXXIX. The History of the	80
81	Chapter LXXX. The History of the	81
82	Chapter LXXXI. The History of the	82
83	Chapter LXXXII. The History of the	83
84	Chapter LXXXIII. The History of the	84
85	Chapter LXXXIV. The History of the	85
86	Chapter LXXXV. The History of the	86
87	Chapter LXXXVI. The History of the	87
88	Chapter LXXXVII. The History of the	88
89	Chapter LXXXVIII. The History of the	89
90	Chapter LXXXIX. The History of the	90
91	Chapter LXXXX. The History of the	91
92	Chapter LXXXXI. The History of the	92
93	Chapter LXXXXII. The History of the	93
94	Chapter LXXXXIII. The History of the	94
95	Chapter LXXXXIV. The History of the	95
96	Chapter LXXXXV. The History of the	96
97	Chapter LXXXXVI. The History of the	97
98	Chapter LXXXXVII. The History of the	98
99	Chapter LXXXXVIII. The History of the	99
100	Chapter LXXXXIX. The History of the	100
101	Chapter LXXXXX. The History of the	101



WILLIAM

1	Chapter in England	1
2	Chapter in France	2
3	Chapter in Italy	3
4	Chapter in Spain	4
5	Chapter in Portugal	5
6	Chapter in the Netherlands	6
7	Chapter in Prussia	7
8	Chapter in Russia	8
9	Chapter in Sweden	9
10	Chapter in Denmark	10
11	Chapter in Norway	11
12	Chapter in the Kingdom of Naples	12
13	Chapter in the Kingdom of Sicily	13
14	Chapter in the Kingdom of the Two Sicilies	14
15	Chapter in the Kingdom of the Romans	15
16	Chapter in the Kingdom of the Lombards	16
17	Chapter in the Kingdom of the Franks	17
18	Chapter in the Kingdom of the Burgundians	18
19	Chapter in the Kingdom of the Visigoths	19
20	Chapter in the Kingdom of the Ostrogoths	20
21	Chapter in the Kingdom of the Lombards	21
22	Chapter in the Kingdom of the Franks	22
23	Chapter in the Kingdom of the Burgundians	23
24	Chapter in the Kingdom of the Visigoths	24
25	Chapter in the Kingdom of the Ostrogoths	25
26	Chapter in the Kingdom of the Lombards	26
27	Chapter in the Kingdom of the Franks	27
28	Chapter in the Kingdom of the Burgundians	28
29	Chapter in the Kingdom of the Visigoths	29
30	Chapter in the Kingdom of the Ostrogoths	30
31	Chapter in the Kingdom of the Lombards	31
32	Chapter in the Kingdom of the Franks	32
33	Chapter in the Kingdom of the Burgundians	33
34	Chapter in the Kingdom of the Visigoths	34
35	Chapter in the Kingdom of the Ostrogoths	35
36	Chapter in the Kingdom of the Lombards	36
37	Chapter in the Kingdom of the Franks	37
38	Chapter in the Kingdom of the Burgundians	38
39	Chapter in the Kingdom of the Visigoths	39
40	Chapter in the Kingdom of the Ostrogoths	40
41	Chapter in the Kingdom of the Lombards	41
42	Chapter in the Kingdom of the Franks	42
43	Chapter in the Kingdom of the Burgundians	43
44	Chapter in the Kingdom of the Visigoths	44
45	Chapter in the Kingdom of the Ostrogoths	45
46	Chapter in the Kingdom of the Lombards	46
47	Chapter in the Kingdom of the Franks	47
48	Chapter in the Kingdom of the Burgundians	48
49	Chapter in the Kingdom of the Visigoths	49
50	Chapter in the Kingdom of the Ostrogoths	50



INDEX

1	Introduction	1
2	Chapter I. The History of the	10
3	Chapter II. The History of the	20
4	Chapter III. The History of the	30
5	Chapter IV. The History of the	40
6	Chapter V. The History of the	50
7	Chapter VI. The History of the	60
8	Chapter VII. The History of the	70
9	Chapter VIII. The History of the	80
10	Chapter IX. The History of the	90
11	Chapter X. The History of the	100
12	Chapter XI. The History of the	110
13	Chapter XII. The History of the	120
14	Chapter XIII. The History of the	130
15	Chapter XIV. The History of the	140
16	Chapter XV. The History of the	150
17	Chapter XVI. The History of the	160
18	Chapter XVII. The History of the	170
19	Chapter XVIII. The History of the	180
20	Chapter XIX. The History of the	190
21	Chapter XX. The History of the	200



4142

4143

807 4144

1681

801



4022
23
24

[Handwritten signature]

